ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ N 1
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
LORI REGION
SHIRAKAMUT N 1 SECONDARI
SCHOOL NPO

ԿԳՄՍ նախարար
պարոն Վ.Դումանյանին

25/08/2022 թ.

Հարգելի պարոն նախարար

Տեղեկացնում եմ Ձեզ,որ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցում առաջացել է անգլերենի ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում ենք հայտարարության տեքստը:

Դպրոցի տնօրեն / Ա. Կյուրեղյան /

Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է անգլերեն առարկայի(20 ժամ)

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 9-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 14 -ին՝ ժամը 15:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, 9փող., շենք 5:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 149779 հեռախոսահամարով: